ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

ՅՈԲԵԼԵԱՆ ՉՈՒՆԵՑԱԾ ՅՈԲԵԼԵԱՐԸ

(Լևոն Շանթի ծննդեան 150-ամեակին)

XX դարի հայ մշակոյթը հարուստ է վառ անհատականութիւններով, յատկապէս՝ գրականութեան եւ արուեստի բնագաւառում։ Եւ այդ անհատականութիւնների շարքում իր բացառիկ տեղն ունի գրող, դրամատուրգ, մանկավարժ, փիլիսոփայ եւ քաղաքագէտ Լեւոն Շանթը։ Սակայն մինչեւ այսօր, հատուկտոր յօդուածներից բացի, նրա գրական հարուստ ժառանգութիւնը, առաւել եւս նրա փիլիսոփայական, գեղագիտական, մանկավարժական հայեացքներն ըստ պատշաճի ներկայացնող աշխատութիւններ գրեթէ չկան։

Այդ բազմաշնորհ մարդն իր մէջ ամբարել էր արեւմտահայ եւ արեւելահայ մշակոյթի, մասնաւորապէս գեղարուեստի վիթխարի իմացութիւն, ժամանակի ընթացքում հրաշալի խաչաձեւել հայ գրական փորձը, աւանդները եւ գեղարուեստական լեզուի գեղեցկութիւնները։

Լեւոն Շանթը ծնուել է 1869 թ. Ապրիլի 6-ին Կ. Պոլսում, գորգավաճառ Սեղբոս Նահաշպետեանի ընտանիքում։ Մանուկ հասակում կորցրել է ծնողներին, եւ հօր անունը յաւերժացնելու նպատակով ընդունել է Սեղբոսեան ազգանունը[1]։

Նախնական կրթութիւնը ստացել է Կ. Պոլսում՝ Սկիւտարի ճեմարանում, 1884-1891 թթ. ուսումը շարունակել է Էջմիածնի Գէորգեան ճեմարանում։ Այստեղ ընկերացել է ապագայ մեծ երգահանի՝ Կոմիտասի, գրականագէտ Նիկոլ Աղբալեանի, պատմաբան եւ բանասէր Նիկողայոս Ադոնցի հետ։

Ուսումնառութեան եօթ տարիների ընթացքում հոգեւոր ճեմարանի մթնոլորտը հայկականութեան իր դրոշմն է դնում Շանթի պատանեկան հոգու վրայ. միտքը լաւագոյնս իւրացնում էր աւանդուած լեզուները, գիտական ու գրական դասերը, իսկ սիրտը՝ ժառանգում իր ուսուցիչների արծարծած սրբազան բոցը։ Նա տիպար եւ առաջնակարգ աշակերտ էր, մանաւանդ գիտական դասերի մէջ, իսկ գրականութիւնը դարձել էր նրա ազատ ժամերի ալեյոյզ տենչը։ Հէնց այստեղ նա ճանաչեց իր հայրենի բնաշխարհը՝ լճերի փրփրադէզ կապոյտը եւ դալարալիր երկնահուպ լեռները սկսեցին ալեկոծել նրա սիրտը, ծանօթացաւ ժամանակակից ռուսական գրականութեանն ու քաղաքական շարժումներին, եւ, ինչպէս նկատում է իր բարեկամներից եւ ժամանակակիցներից մէկը՝ Գ. Իփէկեանը, «հոն զգաց իբրեւ հայ իր պարտականութիւնը նուիրուելու հայ ժողովուրդի ծառայութեան» եւ «հոն է որ ինք դարձաւ ամենէն արեւմտահայ արեւելահայը եւ ամենէն արեւելահայ արեւմտահայը. մէկ խօսքով ամբողջական հայը. միաժամանակ եւ լայնախոհ հայը. հաւասարապէս սիրող ու գնահատող այդ բոլորին արժէքներն ու արժանիքները»[2]։ Առաջին հանրապետութեան

---

[1] **Թամրազեան Հ.,** Երկեր, հատոր Գ., Երեւան, ԵՊՀ հրատարակչութիւն, 2010, էջ 528:

[2] **Իփէկեան Գ.,** Շանթի գրական վաստակը, «**Ակօս**», 1952, Թիւ 2-3, էջ 42:

գոյութեան տարիներին սուր էր յատկապէս «արեւելահայ» եւ «արեւմտահայ» հակադրութիւնը, որը վճռականօրէն մերժում էր Շանթը եւ, ինչպէս նկատում է Ս. Վրացեանը, վնասակար էր համարում նոյնիսկ դրա արծարծումը։ «Ի՞նչ արեւմտահայ, ի՞նչ արեւելահայ, միա՛յն հայը բաւական չէ՞։ Մարդը փնտռեցէ՛ք, անհատի արժէքը գործի համար եւ ո՛չ թէ ծննդավայրը...»[3],- յաճախակի կրկնում էր նա։

Լեւոն Սեղբոսեանը, հասարակութեանը յայտնում է 1891 թ., ճեմարանն աւարտելուց մի քանի ամիս յետոյ, Պոլսոյ «Հայրենիք» թերթում՝ «Մնաք բարովի իրիկունը» յուշերգութեամբ եւ Լեւոն Շանթ գրական կեղծանունով[4]։

1892 թ. իմացութեան ծարաւը նրան տանում է Եւրոպա, երիտասարդ գրողը խորանում է մանկավարժութեան եւ բնական գիտութիւնների մէջ։ Ձգտում, յատկապէս, իւրացնել այն գիտութիւնները, որոնք քննում են մարդու հոգեկան եւ ֆիզիքական յատկանիշները, կապը միջավայրի ու բնութեան հետ։

1892-1898 թթ. Գերմանիայում Շանթը ազատ ուսանող է գրւում մանկավարժութեան, ապա մարդակազմութեան, կենսաբանութեան եւ բնագիտութեան գծով։ Ուսումնառութեան տարիներին նա երբեք աչքաթող չի անում գրական գործը։ Ծանօթանում է նաեւ գերմանական մշակոյթին, կարդում՝ Իբսէնի, Կէօթէի եւ Շէյքսփիրի ստեղծագործութիւնները եւ ստեղծում է իր առաջին յայտնի երկերը՝ «Լեռան աղջիկը» պոեմը (1892) եւ «Երազ օրեր» վիպակը։

1898 թ. նա վերադառնում է Կովկաս։ Թիֆլիսում ծանօթանում է Յովհաննէս Թումանեանի հետ, սկսւում է մեծ բարեկամութիւնը։ Շանթը դառնում է «Վերնատան» եռանդուն անդամը, շուտով սկսում է մասնակցել նաեւ իշխանուհի Մ. Թումանեանի կազմակերպած գրական «հինգշաբթիներին»։ Գրական մթնոլորտը մեծ դեր է խաղում գրողի կեանքում։ Այս հաւաքոյթներում Յովհ. Թումանեանը, Ղ. Աղայեանը, Աւ. Իսահակեանը, Ն. Աղբալեանը, Դ. Դեմիրճեանը, Լեւոն Շանթը եւ ուրիշներ գիշերները մինչեւ լոյս քննարկում էին ստեղծագործական հարցեր, անցնում էին իւրօրինակ ուսումնառութիւն՝ զրոյցներ բացելով համաշխարհային գրականութեան մասին։ Զափազանց կարեւոր եղաւ եւ այն, որ այս հաւաքոյթներին նրանք շատ անկեղծ քննում էին նաեւ սեփական երկերը[5]։

Գրական աշխատանքին զուգընթաց՝ նա հիմնաւոր զբաղւում է մանկավարժութեամբ։ Սկզբում մասնաւոր դասեր է տալիս զանգան ընտանիքներում, ապա մի բարերարի օգնութեամբ կրկին մեկնում է Եւրոպա, սովորում հաշուապահութիւն։ Վերադառնալով Կովկաս՝ նա դարձեալ զբաղւում է ուսուցչութեամբ։ 1906-1907 թթ. աշխատում է Թիֆլիսի Գայիանեան դպրոցում՝ որպէս տեսուչ, իսկ 1908 թ. հրաւիրւում է Երեւանի թեմական դպրոց՝ որպէս գրականութեան եւ պատմութեան ուսուցիչ։

Նրա աշխարհայեացքը, ինչպէս նշեցինք, ձեւաւորեցին Գէորգեան ճեմարանի ազգային մթնոլորտը եւ Կովկասում ծաւալուած հասարակական-քաղաքական շարժումները, ուստի, բնական է, որ նա չէր կարող անտարբեր մնալ իր շուրջն ընթացող իրադարձութիւնների հանդէպ։ Յետագայում, անդրադառնալով այս շրջանի իրադարձութիւններին, նա գրում է. «Գիտակցութեան եկած օրերս կապուած էի, անշուշտ, մեր յեղափոխական շարժումներուն, դեռ Գէորգեան ճեմարանէն։ Իմ բոլոր ընկերներս, ծանօթներս, իմ սիրելի մօտիկ մարդիկները այդ շարժման մէջ էին, եւ ես մօտիկէն ծանօթ էի ներսի, դուրսի բոլոր կատարուածներուն։ Բայց ինքս գիտակցաբար մէջը չէի

[3] **Վրացեան Ս.,** Շանթի հետ, **«Ակօս»,** 1952, Թիւ 2-3, էջ 21։

[4] **«Ակօս»,** Ը. տարի, թիւ 2-3, Պէյրութ, 1952, էջ 8։

[5] **Թամրազեան Հ.,** Երկեր, հատոր Գ., Երեւան, ԵՊՀ հրատարակչութիւն, 2010, էջ 529։

մտած։ Ես իմ վրայ նայած եմ միշտ իբրեւ գրչի մարդու եւ յեղափոխութիւնը նկատած եմ միշտ իբրեւ զէնքի գործ, ես այդ զէնքը չեմ գործածեր, պէտք չէ որ մտնեմ զէնքով քարոզողներու մէջ»[6]։ Այնուամենայնիւ, չնայած իր «գրչի մարդ» մնալու դիրքորոշմանը, «թրքամիտ առաջնորդի մը մատնութեամբ» Շանթը դարձաւ կասկածելի եւ դիմեց փախուստի. «Պոլսէն անցաւ Կովկաս եւ անկէ յաջողեցաւ անցնիլ արտասահման ուսանելու, յոյսը դրած իր գրչին եւ իրեն խօստացուած նիւթական համեստ միջոցներուն»[7]։ Յեղափոխական իրադարձութիւնների զարգացումները յետագայում փոխեցին նրա դիրքորոշումը, եւ 1909 թ. Շանթն անդամագրուեց Դաշնակցութեանը՝ գրական գործունէութիւնը համատեղելով քաղաքական գործունէութեան հետ։

Զափազանց ուշագրաւ եւ դրամատիկ ընթացք ունեցան Շանթի կեանքի յետագայ տարիները։ Դժուար ու դառն տարիներին ամբողջովին տարւում է հայ ժողովրդի քաղաքական ճակատագրով, առանձին ոգեւորութեամբ նուիրւում առաջին Հանրապետութեան ստեղծմանը։ 1919 թ. ընտրւում է հանրապետութեան խորհրդարանի փոխնախագահ։ Ակտիւօրէն մասնակցում է ազգային պատուիրակութեան Մոսկովեան բանակցութիւններին։ 1920 թ. Դեկտեմբերի իրադարձութիւններից յետոյ բազմաթիւ մտաւորականների հետ Շանթը նոյնպէս ձերբակալւում է եւ տարւում Երեւանի բանտ, բայց 1921 թ. փետրուարեան իրադարձութիւններից յետոյ ազատւում է բանտից եւ Նիկոլ Աղբալեանի հետ միասին, լաստի վրայ, անցնում է Արաքս գետը։ Հայրենիքից հեռանալով սկսւում է նրա տարագրութեան երկար շրջանը, նախ՝ Ֆրանսիա, յետոյ Եգիպտոս, ապա վերջնականապէս հաստատւում է Պէյրութում[8]։

1923 թ. Մարսէյլում աւարտւում է նրա քաղաքական բեղուն գործունէութիւնը եւ մինչեւ 1925 թ. հանգստանում է հեւ ի հեւ ստեղծագործող գրագէտը։ Իր համար ծանր պայմաններում շարունակում էր զբաղուել ուսուցչութեամբ եւ հէնց այդ շրջանում գրում է ընկերային-քաղաքական բովանդակութեամբ «Մեր Անկախութիւնը», «Ի՞նչ է Ազգութիւնը», «Ժողովուրդ եւ Մտաւորականութիւն» երկերը։

1926 թ. հայերէնի եւ ընդհանուր պատմութեան դասաւանդման նպատակով Շանթը հրաւիրւում է Աղեքսանդրիայի Պօղոսեան Ազգային Վարժարան, որի տնօրէնն իր վաղեմի ընկեր՝ Ն. Աղբալեանն էր։

1928 թ. մի խումբ հանրային գործիչներ եւ մտաւորականներ Գահիրէում հիմնադրում են Հայ Կրթական եւ Հրատարակչական Համազգային Ընկերութիւնը, նրանց առաջին մտահոգութիւնն էր պետութեան բարեացակամութիւնը եւ տեղացի ժողովրդի ասպնջականութիւնը վայելող Սփիւռքի հայաշատ այդ կենտրոնում հիմնել հայ մշակոյթի մի օճախ, հայ նոր սերնդի փրկութեան համար։ Ընտրուած վայրը Լիբանանի մայրաքաղաք՝ Պէյրութն էր, իսկ մշակոյթի այդ վառարանի՝ ճեմարանի տեսուչ են նշանակւում՝ Լ. Շանթը եւ Ն. Աղբալեանը։

Նոյն թուականին Շանթը գրում է իր վերջին թատերգութիւնը՝ «Օշին Պայլ»-ը, որն իր շօշափած հարցերով, կերպարների հոգեկան հարուստ աշխարհով եւ ճշմարտացիութեամբ, նրա իսկական ստեղծագործական նուաճումն էր։

1929 թ. սկսեալ փոխւում է Շանթի ստեղծագործութեան դաշտը, եւ նրա կեանքի միակ նպատակը դառնում է մատղաշ սերունդին լոյսի ջամբումը։ Այդ նպատակով կեանքի վերջին քսան տարիներին Շանթը անդուլ խանդով կազմում ու հրատարակում է մայրէնի լեզուի դասագրքերի իր շարքը, նախակրթարանի ամենատարրականից

---

[6] «**Հայրենիք**», 1960, թիւ 4, էջ 28։

[7] **Իփէկեան Գ.,** Շանթի գրական վաստակը, «**Ակօս**», 1952, Թիւ 2-3, էջ 42։

[8] Տե՛ս **Թամրազեան Հ.,** Երկեր, հատոր Գ., Երեւան, ԵՊՀ հրատարակչութիւն, 2010, էջ 530։

մինչեւ բարձր դասարանների համար։ Պատրաստում է նաեւ մանկավարժութեան եւ հոգեբանութեան հատորներ, ինչպէս եւ նախագրային շրջանից մինչեւ մեր օրերը ստեղծագործուած «Հայ Բանահիւսութիւնը» ինքնատիպ հատորը։ Կազմում էր այբբենարաններ, ստեղծում ձեռնարկներ՝ գրականութեան տեսութեան, հայ քերականութեան եւ գրականութեան պատմութեան։ Աշխատում էր նոյնիսկ այն ժամանակ, երբ մահը դռների ետեւում էր, եւ չկար փրկութեան ելք անբուժելի հիւանդութիւնից։ Այս շրջանի գեղարուեստական իր միակ գործը «Հոգիները Ծարաւի» վէպն է, որի թեմատիկան ու յղացումը գալիս էր, հաւանաբար աւելի երիտասարդ տարիներից։

1939 թ. 2-րդ Աշխարհամարտի ամբողջ ընթացքում սեւ օրեր են ապրում Լ. Շանթն ու իր ճեմարանը։ Նիւթական չնչին վարձատրութիւնը յաճախ պակասում էր թէ՛ իրեն եւ թէ՛ իր պաշտօնակիցներին։ 1944 թ. ռմբակոծման ընթացքում՝ Պերլինում մոխրանում է իր միջնեկ զաւակը։ Զաւակի տարաբախտ մահից մէկ տարի անց, 1945 թ. խլիրդը յաւէտ բաժանում է Լ. Շանթին իր կեանքի ընկերուհուց։ 1947 թ. կայծակնահար անշունչ ընկնում է նաեւ Ն. Աղբալեանը։ Սակայն Լ. Շանթի երկաթեայ կամքի ու կորովի դէմ փշրւում են յուսահատութիւնն ու սուգը։ Կսկիծն ու արցունքը չեն տկարացնում նահանջին անծանօթ իր քայլերը։ Հարազատների մահուան պատճառով ոչ մի օր չէր բացակայում իր պաշտօնից։ Կսկիծը կծկում էր իր մէջ, նոյն ոգեւորութեամբ շարունակում էր իր դասաւանդումը եւ ջանում համոզել, ոյժ ներշնչել իր ընկեր-պաշտօնակիցներին չթուլանալու համար իրենց առաքելութեան մէջ։

Այդ մեծ լարումների եւ աշխատանքի մէջ էլ աւարտւում է նրա կեանքի ուղին, որն անմնացորդ նուիրում էր հայրենիքին... 1951 թ. Մայիսին լեարդի լուրջ հիւանդութիւնը անկողին է գցում Լ. Շանթին։ Մէկուկէս ամիս յետոյ վիրաբուժական միջամտութիւնը յայտնաբերում է անբուժելի հիւանդութիւնը։ Ապաքինման վաղանցուկ շրջանը լաւատես է պահում իր վիճակին անգիտակ Շանթին, բայց երբ զգում է, որ երկիրը կամաց-կամաց խոյս է տալիս ոտքի տակից՝ մահուան հանդէպ մնում է անվախ ու անվրդով։ Անդարձ մեկնելուց առաջ ուզում էր վերջացնել իր գործը, չտանել հետը ոչինչ, ամէն բան ժառանգութիւն թողնել իր ժողովրդին, որին՝ երդուել էր պոլշեւիկեան բանտից ազատուելու օրը՝ ծառայել մինչեւ վերջին շունչը։

Եւ յարգելով իր երդումը մինչեւ Նոյեմբերի 19-ը թելադրում է իր նախկին աշակերտներից մէկին ու ամբողջացնում իր մանկավարժութեան 2-րդ հատորը։ Նոյն օրը կորցնում է իր պայծառ գիտակցութիւնը ու տասը օրուայ տառապալից հոգեվարքից յետոյ Նոյեմբերի 29-ին, Պէյրութի իր բնակարանում փակում է աչքերը։

Անձրեւային այդ օրը մեծ գրողին եւ ուսուցչին գերեզմանատուն էին ուղեկցում հազարաւոր հայ մարդիկ... Լեւոն Շանթը բազմաժանր գրող է եւ բեղմնաւոր գիտնական, տեսաբան ու մանկավարժ։ Նրա գրական ուղուն բնորոշ էին անհանգիստ որոնումները, ստեղծագործական գիւտերն ու անակնկալները։ Փորձել է գրեթէ բոլոր ժանրերն ու տեսակները։ Իր ստեղծագործական կեանքի յիսունից աւելի տարիների առաջին տասնամեակում գրել է քնարական, խոհա-փիլիսոփայական բանաստեղծութիւններ, փորձել է պոեմի տեսակը, սկսած 1890-ականներից՝ զուգահեռաբար լոյս են տեսել նրա պատմուածքները, վիպակներն ու վէպերը։ Ստեղծել է մարդկային փոխյարաբերութիւնների, մտքերի ու յոյզերի անհանգիստ մի աշխարհ, որն իր ուրոյն տեղն ունի հայ գեղարուեստական մտքի զարգացման մէջ[9]։

Եթէ Թումանեանը խոր հաւատ ունէր ազգային կեանքի հանդէպ եւ նրա մտահոգութեան առարկան ժողովուրդն էր, իր գոյութեան դժուարին հարցերով, ապա

[9] Տե՛ս նոյն տեղում, էջ 530-531։

Շանթի իտէալը անհատն էր, յաճախ կեանքի հոգսերից վերացած անհատը, որն ազատութիւն էր որոնում պատրանքի լուսաւոր հորիզոններում։ Շանթն այն եզակի արուեստագետն էր, որի հայեացքները ձեւաւորուեցին երկու տարբեր միջավայրում, հայ եւ եւրոպական իրականութեան մէջ։ Ըստ որում երկրորդ միջավայրի ազդեցութիւնն աւելի վճռական եղաւ գրողի աշխարհայեացքի, փիլիսոփայական եւ էսթետիկական ըմբռնումների ձեւաւորման ընթացքում։

Կեանքի մեծ մասն ապրելով հայրենիքից հեռու, Շանթը կորցնում է ամենակարեւորը՝ ստեղծագործելու ոգեշնչման ակունքը։ Ուստի, նրա բանաստեղծական ժառանգութիւնը շատ մեծ չէ։ 1891-1894 թթ. ընթացքում Կ. Պոլիս եւ Լայպցիգ քաղաքներում գրել է քնարական մի փունջ՝ «Երգեր» խորագրով։ Այս մի քանի տասնեակ երգերի մէջ արտայայտուած են ջահել հոգու երազները, յոյսերը, խոհերը՝ կեանքի ու մահուան, հայրենիքի եւ բնութեան մասին։ Դրանց մէջ սակայն դժուար է տեսնել գեղարուեստական մտածողութեան հարստութիւն. «Վերնատան» միւս բանաստեղծի Դերենիկ Դեմիրճեանի պէս նա դեռ որոնում էր իր աշխարհը, այնինչ միւս երկուսը՝ Յովհ. Թումանեանը եւ Աւ. Իսահակեանը, արդէն հորիզոն էին բացում հայոց երգի համար[10]։

Ճիշտ է «Վեռան աղջիկը» պոեմում եւս կան ջերմաշունչ հատուածներ՝ նուիրուած հայրենի բնութեանը, ինչպէս նաեւ անաղարտ սիրոյ գեղեցիկ դրուագներ, բայց որպէս վիպերգ, այդ պոեմը չունի դրամատիկ խորք եւ կենսական հարստութիւն, չկան կենսական հակասութիւններ, ծալքեր, հոգեկան բարդութիւններ։ Եւ ինչպէս իրաւացիօրէն նկատում է Հ. Թամրազեանը, «Շանթի բանաստեղծական կարողութիւնները արտայայտուել են բոլորովին այլ տեսակներում՝ արձակում եւ դրամատուրգիայում, մասնաւորապէս «Հին աստուածներ» դրամայի մէջ»[11]։ «Մնաք բարովի իրիկունը» կիսա-գեղարուեստական ակնարկներից յետոյ լոյս են տեսնում «Երազ օրեր» (1899), «Վերժին» (1896), «Դերասանուհին» (1896), «Դուրսեցիներ» (1899) արձակ երկերը։

Արձակ երկերում երեւան են գալիս Շանթի մի շարք նոր յատկանիշներ, որոնք կարեւոր էին զարգացման ճանապարհի համար։ Հր. Թամրազեանը նկատում է, որ արձակ գործերում կերպաւորման եւ հոգեբանական հիմնաւորման տեսակէտից նա դեռ չի բարձրանում Շիրվանզադէի, Նար-Դոսի, Մուրացանի եւ Գր. Զոհրապի արուեստի մակարդակին։ Սակայն զգալիօրէն նոր էին հերոսները՝ իրենց յուզական տարերքով եւ գաղափարական նպատակադրումներով, որը, բնականաբար, ուրոյն շունչ ու լիցք էր հաղորդում երկերին[12]։

XX դարասկզբին Շանթի կեանքում տեղի է ունենում ստեղծագործական շրջադարձ՝ արձակից ու պոեզիայից դէպի դրամատուրգիա։ Իրար ետեւից գրում է «Եսին մարդը» (1901), «Ուրիշի համար» (1903), «Ճամբուն վրայ» (1904) դրամաները։ Սակայն, ինչպէս ճիշդ նկատել է Դ. Դեմիրճեանը, «դրանցից ոչ մէկը դէպք չդարձաւ», այսինքն՝ գրական ծանրակշիռ երեւոյթ չդարձաւ։ Դրանք միայն հետաքրքրական փորձեր էին, որոնց մէջ աստիճանաբար բացւում էր հեղինակի ձեռքը եւ հող էր նախապատրաստւում գալիքի համար[13]։

Երեք դրամաների մէջ էլ աւելի կամ պակաս չափով երեւում են հոգեբանական

---

[10] Տե՛ս նոյն տեղում, էջ 531։

[11] Նոյն տեղում։

[12] Տե՛ս նոյն տեղում։

[13] Նոյն տեղում, էջ 534։

երանգաւորումները, նրբին երազները, ազնիւ ձգտումները... Շատ հերոսներ ապրում են ուրիշ ոլորտներում, հոգեպէս բարձրացած նիւթական շահերից ու կոպիտ կրքերից։ Նրանք կարող են ե՛ւ երազել, ե՛ւ ընկնել գալիքի ճամբաներին։

1909 թ. քութէշով հիւանդ Շանթը, որը Թումանեանի բանտարկութեան պատճառով դառնացած վերադարձել էր Թիֆլիսից, շուրջ քառասուն օրուայ ընթացքում, մեկուսացած շարջապատից, գրում է իր գլուխ գործոցը՝ «Հին աստուածները», որը լոյս է տեսնում 1912 թ. Կ. Պոլսում եւ արժանանում ջերմ ընդունելութեան։ Սկսած 1913 թ.-ի Յունուարից հայկական թատերախմբերը Թիֆլիսում եւ Պաքւում բացառիկ յաջողութեամբ բեմադրում են դրաման, դահլիճները լեփ-լեցուն էին, հանդիսատեսների մէջ կային նաեւ օտարազգիներ։ Մամուլում մէկը միւսի ետեւից լոյս էին տեսնում բազմաթիւ յօդուածներ։ Այդ օրերի նշանաւոր քննադատ Նիկոլ Աղբալեանը այսպէս է գրել. «Հեղինակի անունը ամենքի բերանում, նրա գրքի եղած օրինակները մի օրում սպառուած. այս ամէնը երեւոյթներ են, որ չէր տեսած ոչ հայ բեմը, ոչ հայ գրականութիւնը»[14]։

«Հին աստուածներ»-ը «Պեպո»-ից եւ «Պատուի համար»-ից յետոյ, մի նոր էջ էր բացում հայ դրամատուրգիայի պատմութեան մէջ, ընթերցողին եւ հանդիսատեսին մղում դէպի որոնումներ, բացում նոր հորիզոններ։ Նոր էին թեման, հերոսները, հոգեբանական կոնֆլիկտները, մանաւանդ՝ կերպարների լուծումները, քնարական շունչը եւ խոհական տարերքը։ Ինչպէս հեղինակն է նշում դրամայի խորագրի տակ, դէպքերն ու մարդկանց գործերը տեղի են ունեցել «Հազարամեակ մը մեզմէ առաջ», այսինքն՝ հայոց միջնադարում՝ 10-13-րդ դարերում։

Շանթին յաջողուել է ստեղծել գեղարուեստական եւ բեմական արժանաւորութիւններ ունեցող երկ, ուր հերոսների բախումները սկիզբ են առնում հոգեկան դրամայի տարբեր վիճակներից, ներքին հակասութիւններից։ Դա հոգեբանական ոյժ է հաղորդում դրամային եւ բնական դարձնում նաեւ արտաքին ընդհարումները։ Շանթը գրել է ինքնատիպ երկ՝ քնարական-փիլիսոփայական թեքումով, ընտրել է հեռաւոր մի կեանք, որը բնորոշ էր հոգեկան բուռն բախումներով, կենսական եւ իմացական յայտնի շրջադարձերով։ Բնականաբար, իր դրամայում նա օգտագործել է իրապաշտ, ռոմանտիկ եւ սիմվոլիստական ոճերի որոշ յատկանիշներ դարի մթնոլորտը վերականգնելու եւ այդ հիմքի վրայ լուծելու մի շարք հոգեբանական բարդ խնդիրներ՝ կապուած կեանքի եւ ոգու ճամբաների հետ։ Նա հրաշալի զուգակցել է իրապատում ոճը ռոմանտիկ երազների եւ սիմվոլիստական զանազան տեսիլների ու մտապատրանքների հետ, այսինքն՝ ստեղծել է իրականի եւ ենթագիտակցականի իւրօրինակ հիւսուածք[15]։

«Հին աստուածներ»-ից յետոյ դրամատուրգ Շանթը գրեթէ ամբողջովին անցնում է պատմական թեմատիկային՝ նիւթ ունենալով 10-13-րդ դարերի հայկական, մասամբ նաեւ բիւզանդական քաղաքական-սոցիալական կեանքի կարեւոր երեւոյթները։ Այս երկերում աւելի մեծ տեղ են գրաւում պատմական ոգին, հեղինակն ընտրում է որոշակի շրջանի անցքեր, վերակերտում հաւաստի հերոսներ ու կոնֆլիկտներ։ Այդպիսով Շանթն սկսում է հանդէս գալ որպէս հոգեբան՝ վերլուծական ձիրքով։ Ակնառու է դառնում նաեւ Շանթ մտածողի հակումը դէպի պատմութեան փիլիսոփայութիւնը, որը հարստացնում է երկերը, մեծացնում դրանց իմացական ոյժը[16]։

---

[14] Նոյն տեղում, էջ 535:

[15] Նոյն տեղում, էջ 543:

[16] Տե՛ս նոյն տեղում, էջ 544:

«Հին աստուածներ»-ին յաջորդող տասնամեակի ընթացքում, երբ Լ. Շանթը տենդագին կերպով լծուում է հայ պետական ու քաղաքական գործին՝ միաժամանակ թոյլ չի տալիս, որ ժանգոտի գրագէտի իր գրիչը։ Աւելին՝ այդ տարիների հայ քաղաքական կեանքի վայրիվերումների ազդեցութեան տակ, զարմանալիօրէն գտնում է ժամանակ՝ պրպտելու պատմութեան էջերը, գտնելու համար հայ յաղթապանծ անցեալը, հայ ոյժն ու դէպի անկախութեան խոյանքը մանրմնաւորող դէմքեր։

Լեւոն Շանթը ութսուն տարի ապրեց եւ հայ ժողովրդի համար վերելքի, անկման, վերականգնման եւ տառապագին մաքառումների այդ դժուարին ժամանակները ցմբրուր ճաշակեց, սակայն մշտապէս կանգուն մնաց եւ գրաւեց հայ կեանքի յառաջապահ դիրքերը՝ դառնալով Թիֆլիսի գրական-մշակութային զարթօնքի մեծարժէք դրօշակակիրներից մէկը, եղաւ հայ ազգային-ազատագրական շարժման հաւատաւոր եւ լուսաւոր առաջնորդներից, դարձաւ սերունդների հայեցի կազմաւորման ու հոգե-մտաւոր զարգացման մեծ դաստիարակը եւ երբ հնչեց նորանկախ Հայաստանի քաղաքական-պետական կեանքին տիրութիւն անելու ժամը՝ անվարան նետուեց գործի ասպարէզ, հայ ժողովրդի եւ Հայաստանի համար ճակատագրական ամենադժուարին բանակցութիւններին իր ներդրումը կատարելով ու ազգային անկորնչելի արժէքների, իրաւունքների եւ շահերի անզիջող պահապանը դառնալով։

Եւ ուր էլ ճակատագիրը տարաւ նրան՝ Լեւոն Շանթը ողջ էութեամբ հաւատարիմ մնաց ստեղծագործ այն ներոյժին, որ բխում էր հայ ժողովրդի բազմադարեան ժառանգութիւնից, ինքնազարգացման եւ ինքնակատարելագործման դարաւոր զէնքերով մշակուած ու յղկուած էր եւ միշտ առաջ էր մղում ամբողջական հայն ու ամբողջական մարդը մարմնաւորելու ձգտումով։

Պատկառելի գրական ու կրթական վաստակի տէր Շանթը այդպէս էլ ոչ մի անգամ յոբելինական հանդիսութեան չարժանացաւ։ Պատճառը նրա՝ իսկական մտաւորականի եւ ստեղծագործող մարդու ինքնաբաւութիւնն էր։ Սովորութիւն չունէր իր արածների եւ անելիքների մասին խօսելու եւ թոյլ չէր տալիս, որ, իր ներկայութեամբ, ուրիշները խօսեն։ Անհատապաշտ այս մարդու եսը սիրում էր քօղարկուել, մոռացուել եւ մենութեան մէջ մնալ։

Կեանքի վերջին տարիներին, երբ նրան առաջարկուեց յոբելեանը տօնել, Շանթն ընդիմացաւ՝ ասելով. «Յոբելեա՞ն, ի՞նչ ընելու համար. հանդէս ու ճառ, գովք ու ծափ... Օ՜, ո՜չ, ինծի համար չեն այդ բոլորը. զուր ժամավաճառութիւն։ Եթէ կ'ուզէք իսկապէս գրչի մարդը պատուել եւ օգտակար գործ մը կատարած ըլլալ, որոշ գումար մը գոյացուցէ՛ք, ամբողջական երկերս տպագրելու համար»[17]։

Շանթն այն քչերից էր, որոնք բնատուր տաղանդից եւ ձիրքերից այն կողմ էին անցնում եւ որոնց մարդկային արժէքի փառքի առջեւ նսեմանում էին միւս բոլոր ստորոգելիները։ Ի զուր չէր, որ Նափոլէոնը Կէօթէին ծանօթանալով, աւելի բարձր գնահատական որակում չգտնելով ասել է. «Պարոն Կէօթէ, դուք մարդ էք»։

Մուշեղ Իշխանն էլ հետեւելով Նափոլէոնի օրինակին՝ Շանթին ներկայացնելու համար ամենաարդար եւ իրաւացի կերպով կրկնել է նոյն խօսքը. «Լեւոն Շանթը մարդ էր»[18]։

---

[17] **Իշխան Մ.,** Երեք մեծ հայեր, Պէյրութ, 1952, էջ 82-83:

[18] Տե՛ս նոյն տեղում, էջ 84: